ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2016թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկի 17.1 քմ և 2-րդ հարկի 232.9 քմ մակերեսներով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը տրամադրել «ՎԷՄ» կրթամշակութային հիմնադրամին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետարան է դիմել «ՎԷՄ» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահը՝ Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկի 17.1 քմ և 2-րդ հարկի 232.9 քմ մակերեսներով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով «ՎԷՄ» կրթամշակութային հիմնադրամին տրամադրելու խնդրանքով:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ.39-Ա որոշմամբ՝ համայնքային սեփականություն հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկի 17.1 քմ և 2-րդ հարկի 232.9 քմ մակերեսներով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով 5 տարի ժամկետով տրամադրվել են «ՎԷՄ» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

Ներկայումս, «ՎԷՄ» բարեգործական հասարակական կազմակերպությունը դիմել է Երևանի քաղաքապետարան հայտնելով, որ կազմակերպությունը 100 տոկոսով իրեն պատկանող «ՎԷՄ Սփիւռ» ՍՊԸ-ի բաժնեմասը ամբողջությամբ նվիրատվությամբ փոխանցել է «ՎԷՄ» կրթամշակութային հիմնադրամին, ինչի պարագայում կազմակերպությունը խնդրում է Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկի 17.1 քմ և 2-րդ հարկի 232.9 քմ մակերեսներով տարածքներն փոխանցել «ՎԷՄ» կրթամշակութային հիմնադրամին և ձևակերպել հիմնադրամի անհատույց օգտագործման իրավունքը: Զուգահեռ «ՎԷՄ» բարեգործական հասարակական կազմակերպությունը խնդրել է նաև Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ.39-Ա որոշման համաձայն կազմակերպության հետ կնքված անհատույց օգտագործման պայմանագիրը լուծել:

«ՎԷՄ» կրթամշակութային հիմնադրամի հիմնական նպատակն է ազգային, հոգևոր և մշակութային ժառանգության լուսաբանումը, արդիականացումը, տարածումը, կրթական տարաբնույթ ծրագրերի իրականացումը, կենսաթոշակների տրամադրումը, մանկատներին, ծերանոցներին, սոցիալապես անապահով և խնամքի կարիք ունեցող անհատներին օգնության տրամադրումը և աջակցումը: Հիմնադրամն իրականացնում է նաև աշխատանքներ՝ ուղղված երեխաների և երիտասարդության հայրենասիրական և հոգևոր դաստիարակությանը:

Հարկ է նշել, որ Բուզանդ 1/3 հասցեում գտնվող շենքում նույնատիպ տարածքներ են զբաղեցնում նաև հասարակական այլ բնագավառում գործունեություն ծավալող կազմակերպություններ, որոնց մասով անցած տարիների ընթացքում ավագանու կողմից ձևավորվել է մոտեցում և համանման դեպքերում այդ կազմակերպություններին տարածքները տրամադրվել են անհատույց օգտագործման իրավունքով:

Հաշվի առնելով «ՎԷՄ» կրթամշակութային հիմնադրամի կողմից իրականացվող գործունեության կարևորությունը մեր հասարակության համար, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու կողմից ձևավորված մոտեցումը նմանատիպ ընկերությունների նկատմամբ՝ աջակցելու և հնարավորություն տալու ունենալ աշխատանքի համար բավարար պայմաններ, համանման դեպքերում միևնույն մոտեցումը ցուցաբերելու սկզբունքից ելնելով, նպատակահարմար է գտնվել մշակել որոշման նախագիծ՝ Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկի 17.1քմ և 2-րդ հարկի 232.9քմ մակերեսներով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով «ՎԷՄ» կրթամշակութային հիմնադրամին տրամադրելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ